

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասախոսություն 2.1. Խտրականության ընդհանուր հասկացություն և սահմանում

Այն հանգամանքը, որ առողջապահության ոլորտում խտրականության և անհավասարության դրսևորումները առանձնապես ծանր հետևանքներ կարող են թողնել ինչպես անհատ պացիենտի կամ առողջ անձի, այնպես էլ հանրային առողջապահության և ընդհանուր հասարակության վրա, մարդու այս իրավունքը ներկայացված է առանձին բաժնում:

Ստորև բերված են խտրականությունը արգելող և հավասարությունը երաշխավորող միաջազգաին և ներպետական փաստաթղթերում ներկայացված որոշ ձևակերպումներ՝

ՀՀ Սահմանադրության հոդված 29. Խտրականության արգելքը

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ օրենքի Հոդված 4.

Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու մարդու իրավունքը

Յուրաքանչյուր ոք, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, տարիքից, առողջական վիճակից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, Հայաստանի Հանրապետությունում ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալ անվճար կամ արտոնյալ պայմաններով՝ պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում:

...

...

ՔՔԻՄԴ 26-րդ հոդված.

Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առաջ և առանց որևէ խտրականության օրենքով ենթակա են հավասար պաշտպանության: Այդ առնչությամբ որևէ կարգի խտրականություն պետք է արգելվի օրենքով և օրենքը բոլոր անձանց համար պետք է երաշխավորի հավասար և արդյունավետ պաշտպանություն խտրականությունից, ըստ որևէ հատկանիշի, այն է՝ ըստ ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային վիճակի, ծննդի կամ այլ հանգամանքի:

Ընդունված է, որ խտրականությունից զերծ մնալու և հավասարության մարդու իրավունքը դիտարկվում է այլ իրավունքների խախտումների հետ միասին: Այլ կերպ ասած՝ եթե որևէ իրավունք խախտվել է մարդու այս կամ այն հատկանիշի, կամ որևէ խմբի պատկանելիության պատճառով, ապա տեղի ունեցել խտրականություն:

Խտրականության սահմանում

Գոյություն ունի խտրականության միջազգային ընդունված սահմանում, որը խտրականությունը ձևակերպում է հետևյալ կերպ.

Խտրականությունը գործողություն է, անգործություն կամ կարգավորում, որն արտահայտվել է անձի իրավունքների և ազատությունների տարբերակմամբ, բացառմամբ, սահմանափակմամբ կամ նախապատվությամբ՝ առանց օբյեկտիվ հիմքերի և հետապնդվող իրավաչափ նպատակի ու ընտրված միջոցների միջև ողջամիտ համաչափության՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական, կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից՝ իրական կամ ենթադրյալ:

Այն հատկանիշները, որոնցով արգելվում է ենթարկել մարդուն տարբերակված վերաբերմունքի՝ խտրականության, կոչվում են պաշտպանված հիմքեր:

Պաշտպանված հիմքերի ոչ ամբողջական ցանկը հետևյալն է՝

- Մեռ
- Ռասա
- Մաշկի գույն
- Էթնիկական ծագում՝ ազգություն

- Սոցիալական ծագում
- Գենետիկական հատկանիշներ
- Կրոն
- Քաղաքական կամ այլ հայացքներ
- Գույքային վիճակ
- Ընտանեկան կարգավիճակ, հղիություն
- Ծնունդ
- Հաշմանդամություն
- Տարիք
- Անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ

Նշված ցանկը ամբողջական չէ և անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների մեջ ներառում են այնպիսի հատկանիշները, ինչպիսիք են սեռական կողմնորոշումը, գենդերային ինքնությունը, առողջական վիճակը և այլն:

Հիվանդության առկայության հիմքով խտրականությանը առավել հաճախ են հանդիպում ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ (ՄԻԱՎ վարակ ունեցող), տուբերկուլոզով հիվանդ մարդիկ, թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձիք, ինչպես նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցողները:



ՀՈՒՇՈՒՄ

Հիվանդությունների հիմքով խտրականությունը դժվար է լինում տարբերակել իրավունքների հիմնավոր սահմանափակումներից և օբեկտիվորեն արդարացված տարբերակված վերաբերմունքից:

Պետությունները կարող են սահմանապակել մարդու որոշ իրաավունքները, եթե սահմանափակման նպատակն է՝ հասարակական կարգի և անվտանգության պաշտպանությունը, առողջության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

Օրինակ՝ կարող են լինել դեպքեր, երբ շրջապատի համար վարակների տարածումը կանխելու համար արդարացված է պետության կողմից կարանտինի հայտարարումը և մարդու/մարդկանց ազատության և ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը:

Մակայն խտրականությունը բացառելու համար իրականացվող գործողությունը պետք է՝

- Ունենա **օբեկտիվ հիմքեր**. օրինակ՝ ապացուցված է հիվանդության մարդուց մարդ օդակաթիլային փոխանցման ուղին:
- Իրականացվի **իրավաչափ նպատակի** համար. օրինակ՝ պաշտպանել այլ անձանց առողջությունը:
- Լինի **ողջամիտ համաչափ**՝ գործողությունների ծավալն ավելին չէ այն չափից, որը բավարար է նպատակին հասնելու համար:

Խտրականության դրսևորում է այն դեպքը, երբ հիվանդանոցում ՄԻԱՎ վարակ ունեցող պացիենտը մեկուսացվում է այլ պացիենտներից և իրեն չի թույլատրվում իր հիվանդասենյակից դուրս գալ: ՄԻԱՎ վարակը չի փոխանցվում օդակաթիլային, սննդի, կենցաղային շփման այլ եղանակներով և նման սահմանափակումը չունի **օբեկտիվ հիմք**: